

չվիրաւորենք Մեծարդոյ Հօր համեստութիւնը՝ եթէ այդ լեռնակառոյց քաղաքին նմանցնենք իր կեանքն ու դործը, բարձր՝ Կովկասի ձիւնակուտակ դադաթնեւուն նման, ուր կը ծածանի ամբիժ դրօշը եղբայրսիրութեան: Եւ սակայն եթէ հոն ալ բարձրանանք, պիտի չկարենանք գտնել զինքը. ինք անպայման ծածկուած պիտի ըլլայ դղեակին ներքին մէկ դադանի անկիւնը, իր խոկումներուն, իր ծրարիւններուն եւ իր աղօթքներուն մէջ ընկղմած:

Բայց վստահ ենք թէ երկրաւոր Հայրը, որ ծածուկն ալ կը տեսնէ, եւ գլխաւորապէս այդ ծածուկ դործերը կը զննատէ, յայտնապէս պիտի վարձատրէ իր հաւատարիմ մատակարարը եւ խմստուն ծառան:

Մենք տակաւին երկար ու երջանիկ դարուններ կը մաղթենք իրեն, ալեկա՛րդ դարուններ, անմեղունակ շուշաններով ծաղկեպտակ, միշտ աւելի պայծառացնելու համար Միաբանութիւնը, եւ անով՝ Եկեղեցին եւ բոլոր Ազգը:

Յորեկանին առիթով՝ շնորհաւորական բաղձաթիւ նամակներ ու հեռագիրներ կը փութային յարգանքով զննատել երկու փաստակաւոր Հայրերուն քահանայական յիսնամեայ զործունէութիւնը: Սրբազան

Քահանայապետը կը զրկէր իր օրհնութիւնը՝ իւրաքանչիւրին առանձին թուղթերով. Հոռի Արեւելեան Ժողովի քարտուղար՝ Ծիր. Թխսըրան կը փութար զննատական գեղեցիկ տողերով, նմանապէս Վսեմ. Հոգեւոր Տէրը Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Ծիրանաւոր՝ Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ, Գերպոճ. Պետրոս Արքեպս. Քէտիճեան՝ տիտղ. Կոդոնիոյ Հայոց, Ուխտիս Ընդհ. Արքայաբլ՝ հեռաւոր Քալիֆոռնիայէն, Միխիթարեան հաստատութիւններու Հայրերը, Իտալիոյ Հայոց Գաղութային եւ Մշակութային Միութեանց Վարչութիւնները, Միխիթ. Նախկին սաներու Միութիւնները՝ Մարտէյլէն ու Փարիզէն, Սեւրի Մուրատեան վարժարանի աշակերտներու ծնողաց Միութիւնը, եւ այլ բաղձաթիւ բարեկամներ, ծանօթներ, սաներ, հետուէն ու մօտէն:

Այս երջանիկ յիշատակը անմահացնելու նպատակով՝ լոյս տեսաւ վանքի տըպարանէն Առաքել Սիւնեցիի «Դրախտագիրք»ը, որ կու գայ հարստացնել մեր նախնեաց զործերու ոսկեղէն շղթան: Հատորիկը, քննական հրատարակութիւնն է միջնադարեան մեր բանաստեղծին մէկ երկարաշունչ քերթուածին, լի անդենական կեանքի մասին հետաքրքրական գիտելիքներով՝ բանաստեղծական զգեստաւորութիւնով:

ԽՄԲ.

1955 - 1956

ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ

ՄՈՒՐՍ - ՌԱԳԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ Մէջ



Ա. կարգ (նստած) ձախէն աջ
 Հ. ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. ԶԷՓԻՋԵԱՆ (Մատակարար եւ ուսուցիչ)
 Հ. ԵՂԻԱ ՎՐԴ. ՓԷՋԻԿԵԱՆ (Տեսուչ)
 Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ (Ուսուցիչ)
 Հ. ՅՈՎՍԷՓ ՊԵՇԵՆԷԼԵԱՆ (Ուսումնասէտ)

Բ. կարգ (տղեր) ձախէն աջ
 ԱԼԵԿՍԱՆ ԴԱՆԷԼԵԱՆ (Յունաստանէն)
 ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆ (Հայկազն)
 ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԷՓԻՋԵԱՆ (Մարտիրոսայէն)
 ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ (Աթէնքէն)

Ահա յետ-պատերազմեան շրջանի երրորդ հունձքը, առողջ ու խոստումնալից՝ որ թեւակոխեց կեանքի սեմը, փայլուն ապագայի հարուստ երազներով: Վստահ ենք թէ պիտի իրականացնեն յոյսերը բոլորին, եւ հայութեան ցրուած բեկորներուն մէջ պիտի արծարծեն ազգային ոգին, եւ բարձր պահեն զազաւարական դրօշը:

միութեան եւ համերաշխ սիրոյ զործունէութեան դաշտին մէջ:

Առ այդ կը մաղթենք նոր կեանքի երջանիկ արշալոյսին հետ, առկայծումը զարոցական շրջանէն ամբարած գեղեցիկ սկզբունքներուն, կրօնքի եւ հայրենիքի սիրով աուլցուն:
